



ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳՔ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊՍՅ՝

Անցեալ 1915 դժնդակ տարում օսմանեան գարհուրելի արից կենդանի մնացած տանկահատակ մեր դժբախտ հայ եղբայրները ինչպէս որ իրենց հայրենական տանից-տեղից փախուստ տալով գունդագունդ չունցին եկան ու թափուեցին Սուրբ Էջմիածին իբրև ի գիրկս մօր խնամակալութեան, այնպէս էլ թափուեցին Սուրբ Էջմիածին իբրև ի գիրկս մօր գրականութեան և նրանց մխիթարութեան հոգևոր պաշարները, այն է, Տանկատանում գտնուած վանքերի, անապատների, եկեղեցիների բոլոր Ձեռագիրները, որոնց մէջ կ'իմ անապատից բերուած կայ մի հագուագիտ Ձեռագիր որ միմիայն պարունակում է իր մէջ Սրբոյն Սահակայ և Մեսրոպբայ միևչեւ այժմ գրականութեան անծանօթ, **Երգք հոգևորք**, մի գիրք, որն Ե դարում սրբազան վաստակատէր հայրերիս ձեռքով գրուելոց լնտոյ, իբրև օրհներգութիւն միոյն Աստուծոյ գործ է դրուել մեր եկեղեցում ի տեղի. այժմեան շարականի և շարականների:

Տանք այժմ այս հոգևոր երգերիս գրքի գրութեան նկարագիրը, և այս յառաջ բերե-

լով բովանդակ գիրքը, իրագել լինենք քաջապէս այն բանի մասին, թէ ինչո՞ւ է տարբեր այս նշանավոր հին գիրքը, այժմեան շարականից և Սուրբ Սահակն ու Մեսրոպը իրենց կեանքի ո՞ր օրերումն են գրել այս աստուածային տառը:

ա. Հոգևոր երգերս գրել է ոմն **Ա.ՂԱՆՍ՝** հաստ, կոկած, դեղնատուն թղթի վերայ, գրելով տեղ-տեղ երգերի վերնագիրը մանր, գեղեցիկ բոլորագրով. երգի առաջին տողը երկաթագրով, այս գրութիւնը գեղեցիկ միջակ բոլորագրով (թղ. 19բ, 24ա):

Մէն միայն իր անունը երկաթագիր փակագրով պահել է նա Մեծի Չորեքշաբթի երգերի խորագրի տակ ըստ այսմ՝ —**Կանոն Դ շաբաթին Ա.ՂԱՆՍ.** (թղ. 72ա) իսկ եկեղեցւոյ ընդհանուր մանկանց համար ստ փրկիչն արած իր կարճ աղերսը ամփոփել է նա փրկչի ծննդեան՝ «Ը զարք վերինք հիացեալ զարմանալին» երգի տակ և ընդհանուր գրութիւնից ջոկելու համար, գրել է մանր բոլորագրով, —«Եւ զաղաթս յաջողեալ զմանկանց մեր» (13բ):

Երկրորդ, երգի միայն առաջին բառը՝ երկաթագրով, այս գրութիւնը գեղեցիկ բոլորագրով (46բ, 100բ, 115բ):

Երրորդ, երգի վերնագիրը խոշորագոյն բոլորագրով, իսկ գրութիւնը խոշոր սիրուն

<sup>1</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. Արխիվ Անգլերիմ Տեր-Հակոբյանի, թղթ. 74, վավ. 77:

Սույն հոդվածը հրատարակութեան է պատրաստել Ա. Թ. Ավրարեզյանը:

բոլորագրով (56բ, 60բ, 67ա, 72ա, 74ա, 77ա, 81ա, 82բ, 137բ):

Ի նկատի առնելով Չեռագրիս գրութեան այս հանգամանքները, Չեռագիրս գրում է ԺԳ կամ ԺԲ դարում:

1836 թուին Վենետիկ տպուած նշանատր Հայկագեան բառարանը ունի հետևեալ բառերից, բայց է որ միակ օրինակը այս գրքից է:

1. **Չորօրինակ հարցնափառ**, որ և Փոքր Հարց կոչի, փառ, և փառեր հարցիցն որ են ի հին ժամագիրս կամ յերգարանս որպէս համատօտ շարականք ի տեղի այժմու ընդարձակ հարցներոյն: գորօրինակ «հարցնափառեր ապաշխարութեան:

Հայր երկնատր որ առաքեցիր զմիածին որդիդ քո փրկիչ աշխարհի և այլն. տես Չեռ. թղ. 46բ:

Է որ բառը տարբեր ձևով, գորօրինակ 2. Հ Բ ունի **երկթերթի**, առանց հոլովման, որ մեզ թուում է թէ երկթերթ բառի սեռական հոլովն է որն ունի այս գիրքը, — թղ. 4բ — «Ի ծնանել ձայնի ամոյն ծնա գբարբառ Զաքարիաս, քանզի մինչև բացեալ էր զշրթունս երկթերթ»:

Է որ բառը չունի և է որ բառերի օրինակները ունի տարբեր ձևով. ՀԲ չունի անբունակ. «Որ կամա եկիր ի չարչարանս մտեր ի գերեզման անբունական Ած» 89ա. 3. Նը ուիրաբար (չունի), բարեհաճոյ, վերակնարկեմ. թղ. 21 — «Որ զմարմնացեալն նորրաբար յածածնէն յերրորդութեանէն խոստովանեալ հաւատացեալ ի սիրոս մեր ընկայցոյք զնա որպէս ի գիրկս իւր Սիմեոն, Քանզի Ած բանն՝ թէ ողղափառ հաւատ ցուցաք և բարեհաճոյ գործս, տաճար գոցոյք հոգևորական (ունի ՀԲ. — եթէ ողղափառ հաւատս ցուցցոյք և բարեհաճոյ...): Թղ. 29ա—29բ. Ապաշ. ԲԶ. Որպէս յուխից ի ծփանաց կենցաղոյս... (վերջին տունը): «Այլ յուտով վերակնարկեմ քեզ, որպէս Պետրոսի ձգեցեր զձեռն քո յազնականութիւն, գթայ ի յիս և ողորմեայ որպէս զմարդասէր: (Ունի ՀԲ—Որ Պետրոսի ձգեցեր յօգնութիւն զձեռն»:

Է որ բառի միակ օրինակը թեպէտ հին է, բայց ունի այս գիրքը: 4(ՀԲ) «Արհամարիցէ որ զհրապարակախօսն. Ոսկ. Յհ. ա. 34: Թղ. 29բ. ապաշ. ԲԶ. Յորժամ զմտաւ ածեմ... (վերջին տունը). Ազնեայ ինձ ի քում հրապարակախոսս աստեմին, և կեցոյ որպէս զմարդասէր:

Հոգևոր երգերիս դասատրութիւնը նման է ձեռագիր և տպագիր շարականների դասատրութեան, և ունի միայն բոլոր տերմուական տօները, բացի շարականի մէջ գտնուած **Տօն ծննդեան Ածածնի և Տօն Յովակիմայ և Աննայի ծնողաց Ածածնի**, որոնք սահմանուել են ԺԳ-րդ դարում և **Տօն անտեաց** ար.

**Ածածնի և վերափոխման** (սա ատր), որոնք սահմանուել են Է-րդ դարում, կամ այս դարից առաջ:

Իսկ սրբոց տօների կարգից ունի միայն «Կանոն Յովհաննու Կարապետի» «օր ի Գրիգորէ և Տրդատայ... կարգեալ էի» և միահամուտ սրբոց հիշատակի համար՝ «Կանոն մարտիրոսաց»:

Չեռագիրս պակաս լինելով վերջից, յիշեալ կանոնից անթերի ունի ԱԶ-ից մինչև ԴԿ ձայնի Զ-րդ երգի միայն առաջին տունը, — «Պայծառացեալ ցնձայ այսաւր կաթողիկէ. կրկ. Տաւնելով զյաղթող ճգնութիւն սրբոց մարտիրոսաց» (թղ. 154բ):

Մարտիրոսաց կանոնի յաջորդ կանոնը ըստ օրինի պիտի լինէր «Կանոն յատօրէն ննջեցեղոց», որը տարաբախտաբար պակաս է:

Դ. Չեռագիրս գրում է 21 բառաձայ տետրակների վերայ, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 8 թերթից և այբբենով իրարից բաժանած, այբբենի ամէն տառը գրած տետրակի առաջին և վերջին երեսների վերայ՝ ըստ այսմ՝ ա—ա բ—բ և շարունակաբար այսպէս գրած ու հասցրած մինչև յ:

Այս տետրակներից պակաս են. սա տետրակի սկզբից 5 թերթ, միջից՝ 1 թ (2—3)

- ե տետրակի » 1 թ (26—27)
- ը » » 1 թ. (55—56)
- լ » » 3 թ. (84—85)
- հ » » 2 թ. (110—111)

և են ընդամենը 54 երգ ըստ այսմ՝ ԱԶ—10, ԱԿ—9, ԶԲ—13, ԲԿ—5, չունի ԳԶ, ԳԿ ձայները. ԶԴ—10, ԴԿ—Ը:

Հոգևոր երգերիս մէջ ոչ մի երգ չունի իւր բառերի վերայ ըստ օրինի երածշտական խազեր կամ ձայնանիշեր:

Յայտնի է ամենքիս, որ երգի առատելութիւնը կայանում է իւր խազերի մէջ, որոնք տխոր կամ ուրախ գեղգեղանք, դայլայլիկը յառաջ բերելով, ընկնում են մարդիս հոգին իրենց տխոր կամ ուրախ անմարմին թևերի տակ, և այնուհետև լինում է մարդս տխոր կամ ուրախ:

Արդ, անկարելի է որ սքն. Սահակ և Մեսրոպ չհասկանային երածշտական գիտութեան այս յայտնի և գլխատր օրենքը և հետևապէս իրենց գրած երգերն էլ գրելին ու կարդային առանց երածշտական խազերի:

Մեծ հայրերիս համար այսպիսի տկար մտածմունք մեր մտքովն անցնելն անգամ մեծ մեղանշականութիւն է մեր կողմից: Մեղանշականութիւն է այն պատճառով, որ եթէ կայ մի յայտնի երգ կամ եղանակ, նա անպատճառ պիտի ունենայ և իւր յայտնի ու յատուկ խազերը, — երգին կամ եղանակին կենդանութիւն տուող այդ անմարմին էակ-

ները, որոնք հայելով, միանալով երգի հետ, իրենց ուրախ կամ տխուր թոխչքներով ցույց են տալիս իրենց սիրտը և իրենց հոգիները։ Գրողները ճիշտ այնպես, ինչպես մեր ապականացու մարմնի մէջ լինեցանք կենաց անապական մնալով հոգի և շունչ, իրենց պարզաձեղ զգայական շնորհքներով գատում որոշում են մեզ անզգայ տարրերից, և յայտնում քարոզում մեր բանաստեղծ լինելը։ Կրկնում ենք, մի երգ էթ շունչի մեր հոգու կամ սրտի վերայ տխուր կամ ուրախ գեղգեղանք փշող սիրո և գգուանաց ցուրտ կամ ջերմ սիրոյ հովեր շնչող խազեր, նա երգ չէ, այլ երգի շնորհքներից գուրկ հասարակ գրուածք, մինչդեռ ակնկալի տեսնում ենք, որ Սուրբ Սահակի և Մեսրոպի յօրինածները հասարակ գրուածքներ չեն, այլ «Հոգևոր երգեր» և յօրինուած միայն այն նպատակով, որ հոգի Աստծուն խմբովին հողեղեն լեզուով բարեբանելու և փառաբանելու դէպքում, ընդ միշտ պիտի բարեբանել և փառաբանել «առիւ և դողութեամբ» (քգ. Զարթ), «արթուն մտօք և անզբօս խորհրդով» (քգ Զ ժամ) և լալով «հոգևոր երգով», որպիսիքն տեսնում, կարդում ենք թէ իրենց նուիրական այս նոր երգերի մէջ և թէ սուրբ ժամագրքում:

Իսկ ո՞ր ուսան երկու սուրբ թարգմանիչներս իրենց այլ և այլ բարձր գիտութեանց հետ երաժշտութեան դասն ու ուսումը, և իրենց ուսածները անփոփոխ բերին թողին մեր աշխարհի մէջ, և անփոփոխ մատակարարեցին մեր աշխարհի ուսումնաստենչ որդւոց, ըստ չափ ու կարողութեան պարզելք այս խնդիրը, դիմելով մեր պատմական գրուածքներին:

Իսկ հոգևոր երգերս այսպէս անխնայ յայտնի բարի նպատակով իրենց ճիշտ խազերից փետրահան արած ու թողած ի ծոց եկեղեցւոյ՝ նրա Կրօնասէր որդւոց համար իբրև մի գուտ դասնաբանական գիրք նրա երգասէր որդւոց համար շարականներ յօրինելու իբրև անվրէպ ձեռնարկ և ուղեցոյց, նրա գրականասէր որդւոց համար իբրև վայելչագեղ գրութեան գեղեցիկ օրինակ ու նմուշ, որին ծարաւ հոգով դիմել են թուած որդիքս, այս պատահել է հաջորդ դարերում, և կպարզելք իրենց տեղում:

Հոգևոր երգերիս մէջ տեղ տեղ ցոլում են այլաբանական ակնարկներ, որոնք ցույց են տալիս թէ սբն. Սահակ և Մեսրոպ այս ոգեշունչ երգերը իրենց կեանքի ժամանակի ո՞ր օրերումն են գրել, և երկրորդ. արդէօք Հայտն աշխարհի խաղաղութեան և անդորրութեան՝ ժամանակ են գրել թէ նրա վրդովման, երկպառակութեան և անմիաբանութեան ժամանակ:

Յայտնի է պատմութիւններից, որ Ե-րդ դարում Սբ. Սահակի օրով Հայոց Արտաշիր

թագաւորի նախարարները՝ Արտաշիրի գեղիս, անառակ, անկարգ ու անկանոն վարք ու բարքից տաղտկացած, դիմեցին սբ. Սահակին միաբանել իրենց հետ, և գահընկեց անել Արտաշիրին՝ պարսից Վուսթ թագաւորի ձեռքով: Մեծն Սահակ իհարկէ երբ չհամաձայնեց նախարարների այս դավաճան խորհրդին ասելով նախարարներին «Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար (Խոր. Գ. ԿԳ)... զիս՝ որ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազան» և թող այս, երբ մեծ քահանայապետս իր հայրական խրատներով ու յորդորներով չկարողացաւ զսպել, մեղմացնել նախարարների կատաղի բարկութիւնը, և յետ կասեցնել նրանց իրենց տիրանեց խորհրդից, այն ժամանակ նախարարները — այս ապերախտ հայերը անպատկառաբար սասցին սբ. Սահակին երեսն ի վեր. «Վասն զի ոչ կամեցար մեզ՝ զթագաւորել նմա, արդ մեք ոչ կամեցուք և քեզ զքահանայանալ մեզ» (Խոր. Գ. ԿԳ):

Եւ իրօք դիմելով Վուսթին խնդրեցին «Ի բաց ընկենույ զթագաւորն իրեանց և պարսիկ անել ունող աշխարհիս» — պարսիկ կառավարիչ նշանակել մեր աշխարհի վերայ (Խոր. Գ. ԿԳ): Եւ խորամանկն Վուսթ ըստ առաջարկութեան նախարարների ոչ միայն գահընկեց արեց Արտաշիրն և յարքունիս գրանեց նրա բոլոր ունեցածը — «զամենայն ինչս» կարգելով Արտաշիր տեղ պարսիկ մարզպան Վեհմիհրշապուհին, այլև միաժամանակ գահընկեց արեց և սուրբ Սահակի, յարքունիս գրաւելով մեծանուն հայրապետիս վարթամ հայրապետանցը, — «զտունն կաթողիկոսական» (Խոր. Գ. ԿԳ), կարգելով մեծ Քահանայապետիս տեղ քաւ և սնափառ արծկեացի երեց Սուրմակին որն այս բոլոր նորանոր չար գործողութեանց և փոփոխութեանց մածունն ու մէխանն, հեղինակն և աղբիւրն էր, որովհետև երբ Վուսթ Արտաշիրի և սուրբ Սահակի գործերը հրապարակաւ բրթրում քննում էր, անելի կարևորութիւն տուեց միայն Սուրմակի՝ այս անարժան հոգեւորականի խօսքերին, «Յօժարութեամբ լսէր չարախօսացն, առաւել ևս յոյժ աղտեղութեան բանիցն Սուրմակայ» (Խոր. Գ. ԿԳ):

Բայց Սուրմակը ինչո՞ւ համար էր աղտեղի խօսքեր խօսում, որովհետև «զաթոռ եպիկոպոսութեանն էր նմա նախարարացն խոսացեալ» (Խոր. ԿԴ):

Արդ, Արտաշիրից յետոյ երբ «բարձաւ Հայոցս թագաւորութիւնը, և Սուրմակի, Բրքիշոյի և Ծմուէլի վարած անարժան կաթողիկոսութիւնից յետոյ երբ միաժամանակ բարձաւ և «Հայոցս արժանատր կաթողիկոսութիւնը» որոց համար Խորենացին սսում է լալով —

«Ողբամ զբեզ Հայոց աշխարհ, զի բարձաւ թագաւոր և բահանայ» (Խոր. Գ. ԿԸ. ԿԴ). այս երկու թանկագին կորուստները հայոց նախարարները ի նկատի առնելով, ուստի մի կողմ դնելով սուրբ Սահակին ցույց տուած իրենց ապաշնորհ և անպատկառ վարմունքը, խորին պատկասանքով և կորագլուխ մտնեցան Քահանայապետիս, աղաչեցին, որ վերստին ընդունէ կաթողիկոսութիւնը «զմեղանս յանձն ատեալ՝ աղաչէին զնա բարձեալ ունել զԱթոռն» (Խոր. Գ. 42), բայց մեծ քահանայապետն երբ յանձն չտուավ, «այլ նա ոչ առնոյր յանձն (անդ) խորին խոցուած այն դառն հանգամանքից, որ այս կողմն և անմիաբան նախարարները ոչ միայն Հայոց թագաւորութեան ու քահանայապետութեան անկման պատճառ դարձան, այլն Հայաստան մի այնպիսի օրորոց շինեցին պարսից ձեռքին, որի մէջ այլևս դժուարին էր աստուածային խաղաղութեան և անդորրութեան օրօրների անուշ ձայն լսել և խաղաղ և անվրդով քնել:

Ըստ իս, այս խոսվալոյզ հանգամանքները եղան պատճառ, որ իմաստուն մեծ քահանայապետս Վաղարշապատից փոխադրուեց Բագրևանդ, և այս նոր քաղաքի կաթողիկէից—Էջմիածին (ՀԲԲԵ), սկսեց «զհոգևոր կաթն դիեցուցանել մանկանց եկեղեցու հանդերձ Մետրոպա գոր թողեալ խարքսխեաց յեկեղեցուն կաթողիկէ ի Վաղարշապատ քաղաքի» (Խոր. Գ. ԿԶ): Արդ մասամբ ի իր հաւանական է, թէ երկու հայրերս իրենց հոգևոր երգերը յօրինել են այս խոսվալոյզ ժամանակ, որովհետև սուրբն Սահակ մութ ակնարկութեամբ՝ իր գրած **Ծննդեան** մի երգի մէջ յառաջ է բերում այն դառնավարամ անցքերը, որոնք եկան դարձան մեր դժբախտ ազգի, նրա եկեղեցու և նոյնիսկ իր մեծ հայրապետիս գլխով, և անցքերը պատշաճում են անելի Վոսմի ժամանակ պատահած անցքերին՝ քան ուրիշի:

Իսկ այս ցաւալի անցքերը ցաւագին սրբտով սուրբ հայրապետս սուրբ կոչս Մարիամ Աստուածածնի տեսութեան առաջ դնելով, «Աղաչում է աստուածամօրս, բարեխօսել առ Փրկիչն աշխարհի **«փրկել զեկեղեցիս ի Հարաւային բռնութենէ»,** իմա՝ Պարսից պետութիւնից, կամ անելի պարզ՝ Վոսմից», «և չթողնել արա աղախնին հանել իր տիկինը (մեր աշխարհի մէջ ի գբօսանս), և աղախնը իր որդիքներով (իւր ընկեր նածիշունքով) փախչել յանապատ աստուածամօրս երեսից»․ անուսակի երգը.

«Ուրախ լըր աշխարհի մարչ և կոչս ... Ուրախ լըր աստուածային խորհրդանոց, գրբի՛ պատմել ոչ բաւեմք, այլ միայն աղաչեմ՝ բարեխաւսեալ, որում զկուսականդ արքուցիք զկաթն, փրկել զեկեղեցի ի հարաւային բռն-

ւոյթենէն և մի թողացուցանել յաղախուն հանել զտիկինն: Այլ գառաջինս խորհրդաբար ի մեզ կատարել, զի միս անգամ աղախնին որդեալն (որդովքն) իրովք փախիցէ յանապատ յերեսացո տիկնոջ և մեր խաղաղացեալք ընդ հրեշտակապետին գոչեացոր գերգս. Ուրախ լըր անթաւամ աշխարհի պատկ»: Հոգերգ. 6ր:

Սուրբ Սահակի մրմունջի պէս ու ձայնով և ազդրութեամբ նրան հաւատար պապէս էլ սուրբ Մետրոպն է մութ ակնարկութեամբ իր աղերսը սիտում առ ոոսս երկնաւոր Հօր իր գրած ապաշխարութեան մի երգի մէջ, աղաչելով երկնաւոր Հօրը, ի դէպ ժամո «Վորմութեամբ խրատել իր ժողովրդեան և իր սրբութիւնները կործանող, իր հաւատացեալներին անարգող անօրէնների ձեռք չմատնել». անհաւասիկ այդ երգը.—

— Զի թէպէտ և բազում անգամ մեղանչեմ, դու ես Աժ մեր բայց ի քէն գալլ ոք ոչ գիտեմք սբ. երրորդութիւն. ողորմութեամբ քո խրատեալ մեզ, և անօրինաց մի մատնիւ. Զսրբութիւն քո կործանեցին և գհաւատացեալս ի քեզ անարգեցին. Ահայ մեծարանն մեթանոսք ուր է Աժ նոցայ. յաննայնի կարող և նախանձոտ տէր լուր մեզ և ողորմեալ»: ՀՈԳԵՐԳ 35ա:

Բիւզ. Ե. դպ. Դ. «Եւ սբն. Ներսէս գրագուկսն համբարձեալ յերկինս խնդրէր ի տեսունէ... մի տալ գծողովորդսն ի ձեռս հեթանոսաց, զի մի երբեք ասիցեն ի հեթանոսս թէ ուր է Աժ նոցա»:

Այսպէս էլ անհաւանական չէ, թէ երկու տօնելի հայրերս իրենց այս աստուածային պատգամները գրել են մեր աշխարհի անդորրութեան ժամանակ և այն ժամանակ երբ խաղաղ սրտով ու հոգով իրենց սիրասուն աշակերտներին հետ գբաղում էին Ս. Գրոյ թարգմանութեամբ և ժամակարգութեան պաշտամունքների կարգաւորմամբ: Եթէ այսպէս ընդունենք, ուրեմն երկու սրբերիս յառաջ բերած վերոյգրեալ դառն ակնարկները՝ կվերաբերեն ոչ թէ Վոսմի ժամանակին, այլ նրա գարշելի պապերի և հաւերի, որոնք ըստ սրբոյն Մետրոպալ բանի, Աստուծոյ «սրբութիւնները կործանելու, նրա հաւատացեալներին անարգելու» և մեր թագաւորներին ու քահանայապետներին անգոսնելու և արհամարհելու կողմից, պակաս չէին անօրէն Վոսմից և այս կարգի թագաւորներից՝ պարսից մէջ, առաջինը եղաւ Ծապուհ իսկ վերջինը՝ Վոսմ և իր յաջորդները: «Դասի աւ (Ծապուհ)... առաջին ի կարգս հալածչաց եկեղեցուն Հայոց (ՊՀԵՀ թղ. 9ր):

Եւ այսպէս. որ ժամանակ էլ որ գրուած լինեն հոգևոր երգերս, սակայն նոքա ուրիշ դարի և մարդոց գրչի արդիւնք չեն, այլ պատկանում են սուրբ Սահակի և Մետրոպի

արդիւնատր գրչին, որպէս ցոյց են տալիս իրենց ակնյայտի պատուական լեզուն, ակնյայտի Աղօթից եօթը նախնական ժամերի լինելը, ակնյայտնի Սաղմունների՝ մանաւանդ ութ կանոնների տակ դրուած Մարգարէից օրհնութեանց և Երից մանկանց երգի (օրհնեալ եւ տէր Ած հարցն մերոց) և սրայաչորդ երգերի կամ սաղմունների ձևով, ոճով և իմաստով գրած հետևողութիւնները. ակնյայտնի՝ սբ. Գրքի օրհնակները՝ մանաւանդ Սբ. Աւետարանի առակները և խրատները զուգահաւասար խօսքերով վերընծայելու. ակնյայտնի՝ խորին հնութեան կնիք կրող ութ ձայների այժմեանից տարբեր գրութեան ձևը և նրանց անունները, որպիսիք են ՉԲ, ՉԳ, ԶԴ, ԶԵ, ԿԶԴ, ԳԿ և Կ. ակնյայտնի խորին հնութեան կնիք կրող երածշտական գիտութեան վերաբերեալ կանոնները, որոնք նըշմարում են ձայնատր տառերի վրայ, որպիսիքն են ա, ե, է, ը, ի, ո, որոնք դրուած են տեղ տեղ բառերի սկիզբը և տեղ տեղ բառերի մէջ՝ բառը կազմող գրերի հետ կից, երգի տաղաչափական կարճ ոտը կամ լանգը տեղը բերելու-լրացնելու համար. ակնյայտնի խորին հնութեան կնիքը կրող և սօների դա-

աստրութիւնը և սօները և այլն, որպէս ցոյց տուաք վերևում:

**ՅՈՒՑԱԿ**

- Համառօտ և Արձակ ձեռագիր և տպագիր գրքերի, որոնցից օգտուել ենք աշխատութիւնս կազմելիս.
- Բիւզ. Փատտոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս. Վենետիկ, 1892.
- Խոր. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց ի Վենետիկ, 1827.
- ՀԲԲՆ. Հայոց Բառ ու Բան. աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի, միաբան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1913.
- ՀՈԳԵՐԳ. Հոգևոր երգք սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, ձեռագիր Լիմ անապատի, բերուած սբ. Էջմիածնի մատենադարանի 1916 թոի օգոստոս.
- ՊԷԵԷ ձեռագիր. Պատմութիւն հալածչաց եկեղեցոյն Հայոց. գրեաց Աբել արքեպ. Մխիթարեան. գտնուում է իմ՝ Սահակ վարդապետիս մոտ:

